բում 11 կաթոլիկի գալիս է 78 բողոքական։ այսինքն վերջինները 6 օթ անգամ աւելի են։ Պրուսիայում խառն ամուսնութիւնները բոլոր ամուսնութիւնների $^1/_{20}$ են կազմում և ամեն տարի այնպիսի ամուսնութիւններն աւելի են աճում. պէտք է ի նկատի առնել որ այդ ամուսնութիւններից ծնուած են 520000 մանուկ (1895 թ). որոնցից 62% ստանում էին բողոքական և միայն 38% կաթոլիկ կրթութիւն։ այն ինչ երեսուն տարի առաջ նոյն դէպքերը տալիս էին 55: 45 համեմատութիւն։ Հետզհետէ յաճախակի է դառնում մի կրօնից միւսն անցնելու դէպքեր. բայց կաթոլիկութիւնից բողոքական դարձողները 10 անգամ գերակշռում են։ Այդպիսի դէպքեր կաթոլիկները հաշուում են 3 միլիոն։ իսկ բողոքականները $2^1/_2$ միլիոն։ բայց չպէտք է մոռանալ որ առաջիններինը 300 տարուայ արդիւնք է։ իսկ վերջիններինը միայն 100 տարուայ։—Այս բոլոր վիճակագրական տեղեկութիւնների հիման վրայ Սէլլին այն եզրակացութեանն է գալիս։ թէ արդէն մեր օրերով կատարւում է Մօնտէսկիէօյի դեռ 1718թուին։ իւր Lettres Persanes-ի մէջ։ արած մարգարէութիւնը թէ՝ «Կաթոլիկութիւնը դեռ ևս գոյութիւն կունենայ հինգ դար ևս»։

Կարդացուեցան և արտասանուեցան բազմաթիւ ճառեր։ որոնց ընդհ. միտքն էր։ թէ պէտք է տարածել բողոքականութեան գաղափարը և խիստ մաքառել անդրլեռնականութեան դէմ։ մերկացնելով պապականութեան և նորա գործիչների տգեղ կողմերը։

Ի վերջոյ ժողովը փակուեցաւ հետևեալ բանաձևերն ընդունելով.

«Աւետարանական դաշնակցութիւնը ջերմ զգացումներով հետևում է Չինաստանի բողոքական քարոզիչների վիճակին։ Աւետարանի աւետաբերները խորին համոզմամբ զոհում են իրենց կեանքը։ որ մի նոր ապացոյց է թէ Քրիստոսի աշակերտութեան ոգին դեռ չէ մեռել։ Առաւել ևս ցաւ է Դաշնակցութեան համար այն անհեթեթ լուրերը իբր թէ չինական խռովութիւնները բողոքական քարոզիչների նիւթածն է։ Դաշնակցութիւնը մեծ յոյս ունի։ որ մօտիկ ապագայում ոչ միայն այդ անհեթեթ լուրերը կը հերքուին։ այլ Գերման ժողովուրդը կհաւաստիանայ թէ բողոքական քարոզիչները ոչ միայն արգելք չեն Չինաստանի խաղաղ բարգաւաճման։ այլ ընդհակառակն աշակցում են չինական ժողովրդի վերածնութեան»։

Միւս բանաձևը.

«Հռոմի պապը իւր Հռոմի փոխանորդին Օգոստ 19 (ն. տ.) գրած նամակի մէջ հայհոյանքի տարափ է թափել բողոքականութեան դէմ։ Բողոքական դաշնակցութիւնը հրապարակով և վճռապէս բողոքում է դրա դէմ և ցաւում։ որ քրիստոնեայ կրօնների մէկի բարձրագոյն սրբազնագործ պաշտօնեան։ որն իրեն Քրիստոսի փոխանորդ և «խաղաղութեան հայր» է կոչում։ մի թուղթ է հրատարակել։ որի մէջ այնքան անխաղաղասէր մոլեռանդութիւն կայ և այնքան զուրկ է Քրիստոսի ոգուց։ Եթէ պապը զարհուրելի է համարում։ որ բողոքականութիւնը Իտալիայում Պետական հովանաւորութիւն է վայելում։ ապա այս ամենը միայն մի նոր ապացոյց է։ թէ՞ուր պապը կարող է իւր ազդեցութիւնը մտցնել որ և է ազգի քաղաքական կեանքի մէջ։ այնտեղ կրօնի և խղճի ազատութիւն փնտռել անմտութիւն է»։

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նոյեմբ. 20-ին Ճեմարանում գրական երեկոյթ էր հանդուցեալ Զանշեանի յիշատակին նուիրուած։ Հոգևոր Տէրը հաճել էր ներկայ լինել Համեստ հանդիսին։ Ներկայ էին միաբանութիւնից բարձրաստիճան եպիսկոպոսներ և վարդապետներ։ Ուսանողներից մէկը գրել էր հանգուցեալ Զանշեանի կենսագրութիւնը. իսկ ուսուցիչներից՝ պ. Յ. Յովհաննիսեան մի ճառով բացատրեց հանգուցեալի գրաւոր գործունէութեան նշանակութիւնը՝ որպէս ռուս հրապարակախօս և գրող և որպէս հայ գործիչ՝ դիւաւորապէս որբերի պաշտպան։ Նորա երկերի մէջ նշանաւորագոյններն են Изъ Эпохи Великихъ Реформъ և Братская Помощь страдающимъ Армянямъ. Այս երկու գրքերն էլ բնորոշում են հանգուցեալի գրական գործունէութիւնը։ Աշակերտներից՝ ոմանք ոտանաւորներ արտասանեցին։ Հանդիսի վերջում Ս. Հայրապետը օրհնեց հանգուցեալի յիշատակը։ Հ. Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ երգեցիկ խումբը ժողովրդական քառաձայն երգեր էր երգում։ Հանդիսից յետոյ՝ Հոգևոր Տէրը հաճեց մի քանի րոպէով հանդստանալ Հ. տեսչի սենեակում։ Ներկայ ուսուցիչները համբուրեցին Ս. Հայրապետի աջը և նորա օրհնութիւնն ստացան։ Ս. Հայրապետի Ճեմարանում եղած ժամանակ բոլոր աշակերտները կանգնած էին միջանցքում կարգով։ իսկ երգեցիկ խումբը Հայրապետի անուան նուիրուած և ուրիշ ժողովրդական երգեր էր երգում։ Համեստ գրական երեկոյթը Ճեմարա-

նականներին համար կատարեալ ուրախութեան տօն էր դարձել Հայրապետի հայրական այցելութեան պատճառով։

Դեկտ. 2-ին աշակերտական գրական երեկոյթ էր նշանակուած Ձեմարանում Ս. Թարգէոն և Բարդողիմէոս առաքելոցի տօնի պատճառով։ Լատինական ուսանողներից երկուսը տօնին պատշաճ ճառեր խօսացին, իսկ փոքրներից մի քանիսը կրօնական բանաստեղծութիւններ էին արտասանում։ Ս. Հայրապետը այս անգամ ևս հաճեց միաբանական ուխտը ներկայ լինել հանդիսին և զանազան նկատողութիւններ արաւ աշակերտների արտասանութեան մասին։ Հանդիսի վերջին Ն. Ս. Օծութիւնը օրհնեց Ձեմարանի ուսուցչական խումբն ու աշակերտութիւնը։

Երկու շաբաթից ի վեր Մայր Աթոռում հիւր է «Բանասէր» ուսումնական թերթի հրատարակիչ և խմբագիր պ. Ց. Կ. Բասմաջեան։ Պարոնը լուսանկար և էսքիզներ պատկերներ է հանում Մայր Աթոռում գտնուած՝ և Ջուարթնոց եկեղեցու նորագիւտ սեպագիր արձանագրութեանց։ Պ. Բասմաջեան հայագիտութեան տոկուն աշխատաւորներից մէկն է, հնայելով նորա նիւթական միջոցների սղութեան՝ ջանասիրութեամբ առաջ է տանում իւր գիտական թերթը և այսուհետև յոյս ունի աւելի ճոխ և մատչելի գնով հրատարակելու։ Յաջողութիւն ենք ցանկանում և մաղթում, որ նորա տաժանելի գործը գնահատուի մեր բանասէր և բանիմաց հասարակութեան կողմից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի.

«Մշակ»-ի № 229-ի մէջ Տ. Ց. մի շատ գեղեցիկ միտք է յայտնում հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի կտակի առթիւ։ Խորէն Ստեփանէ և Սարգիս Ջալալեան եպիսկոպոսները իւրաքանչիւրը 25 հազարական բուբլի են կտակել այլ և այլ հաստատութիւնների անունով, երբ իրենց դրամը 125 կամ 130 տարուց յետոյ կշահուի և մեծ գումարների կհասնի։ Պ. յօդուածագիրը կտակողների կողմից անարդարութիւն է համարում այդ ժամանակակից սերնդի դէմ։

«Եթէ 25000 բուբլին շահ է բերելու հարիւր և աւելի տարիների ընթացքում, մի՞թէ այն բարի գործը, որ կարող էր կատարուել հէնց այժմ այդ 25000 բուբլով, շահ չէր բերելու հարիւր և աւելի տարիների ընթացքում։ Մի՞թէ երբ գուք հնարաւորութիւն է՛ք տալիս մի գիւղացու վերականգնել իր քայքայուած տնտեսութիւնը, մի ուսանողի՝ շարունակել իր ուսումը, մի խեղճ կնոջ՝ չը ծախել իր պատիւը իր որբերին կերակրելու համար, մի հեղինակի՝ տպել իր գիրքը և այլն և այլն,—մի՞թէ, ասում ենք, գուք դրանով օգնում է՛ք միայն այդ գիւղացուն, միայն այդ ուսանողին, այդ կնոջ, այդ հեղինակին, և ոչ թէ նրանց միջոցով նոյնպէս և նրանց շրջապատողներին և նրանց ապագայ սերունդներին։ Դէ հաշուեցէ՛ք այժմ գործի այդ տոկոսը ու համեմատեցէ՛ք նրան փողի տոկոսի հետ, և կըտեսնէ՛ք, որ գործի տոկոսը աւելի մեծ է։»

Մենք միանգամայն համաձայն ենք Տ. Ց-ի մտքերի հետ։ Այդպիսի կտակների մեծագոյն մասը կորչում է և մենք շատ օրինակներ ունինք հէնց մեր կեանքից. այն ինչ կտակը ժամանակակիցների համար գործադրելով ոչ միայն կորուստից ազատ է, այլ և ինքնըստինքեան շահ, ինչպէս պ. յօդուածագրի վերոյ գրեալ խօսքերն են ցոյց տալիս։

***